

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԻՆՏԵՐՏԵՔՍՏԸ
ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՅ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Աստվածաշնչյան իմտերտեքստը բնորոշ է հայ միջնադարյան բոլոր գրական տեքստերին՝ անկախ ժանրային պատկանելությունից ու բովանդակությունից, թեպետ յուրաքանչյուր ժանր և յուրաքանչյուր թեմատիկ տարածք յուրովի է իմաստավորել երևույթը: Իբրև հայ միջնադարի հատկականությունը կրող երկ՝ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»¹ աշխատությունն այդ առումով չէր կարող բացառություն լինել, իսկ Հակոբ Օշականի այն նկատումը, թե՝ «Բացեք որևէ պատմիչ ու էջ պիտի չանցնի առանց Ս. Գիրքին մէկ տողին»², զոնե Դավրիժեցու պարագային միանգամայն հեռու է չափազանցությունից:

Դավրիժեցին իր աշխատությունը գրել է ընդմիջումներով, իսկ կյանքի վերջում վերստին վերադառնալով կիսատ թողած գործին՝ նկատելիորեն շտապել է շարադրանքում՝ հետագայում առթելով Մանուկ Աբեղյանի դիտողությունը, թե «նա (Դավրիժեցին-Ա.Ն.) արագության ետևից է ընկած»³: Աշխատության վերջին որոշ գլուխներ, ըստ ամենայնի, պատմիչը նույնիսկ չի էլ հասցրել վերջնականապես մշակել, և դրանք, իրոք, ինչպես գրում է Լ. Խանկարյանը՝ «թողնում են սոսկ մի այնպիսի հենքի տպավորություն, որի վրա հեղինակը պատրաստվել է ստեղծել կենդանի պատումի հյուսվածքը» (էջ 59): Եվ եթե նույնիսկ չլինեին էլ այդ հարկադիր ընդմիջումների մասին Դավրիժեցու երբեմն ուղղակի վկայումները, ապա «Գիրք պատմութեանց»-ի լեզվի և ոճի, ու, ընդհանրապես, կառույցի տարտղնվածությունը կմղեր մեզն եզրակացության: Իբրև հյուսվածք՝ աշխատությունը այդ պատճառով շատ է տուժել: Դա տարածական է մաս խնդրադիր երևույթի վրա: Այն համակարգված բնույթ չունի և հատուկ արժեք է ձեռք բերում, երբ դիտարկվում է ոչ թե ընդհանուր, այլ մասնավոր կառույցների համաձիրում: Մասնավոր դր, աստվածաշնչյան իմտերտեքստի դավրիժեցիական կիրառությանը բնորոշ է պատեհ-անպատեհությունը, այսինքն՝ գիտակցված դիմում-հղումների կողքին մեծ թիվ են կազմում սովորույթի ուժով, իներցիայով շարադրանք ներքերված աստվածաշնչյան տեքստի կիրառություններ:

Սովորաբար, իմտերտեքստը դրսևորման ընդհանրական երկու հիմնական կերպ ունի՝ բացահայտ և թաքնված: «Գիրք պատմութեանց»-ում գերիշխում է բացահայտ իմտերտեքստը, երբ Աստվածաշունչը օգտագործվում և մեջբերվում է կամ բնագրային ճշգրտությամբ, կամ շատ մոտ բնագրին, իսկ երբեմն առկա է մաս որոշակի-կոնկրետացնող հղում: Ինչպես՝

«...*ըստ գրեցելումն թէ*. «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովուրդոց, եւ արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց: Այլ խորհուրդ Տեառն յախտեան մնայ, եւ խորհուրդ սրտի նորա յազգէ մինչեւ յազգ»...» (էջ 183, հղվել է՝ Գիրք սաղմոսաց⁴, ԼԲ, 10-11): Ուշարժան է, որ (քերված օրինակում էլ այդպես է) *Աստվածաշունչ* կամ *Սուրբ Գիրք* գրելու փոխարեն Դավիթեցին հղումներն անում է կտակարանների մասնավոր կառույցներին կամ կիրառում այնպիսի փոփոխակներ, որոնք ժամանակին ընկալվել են բացառապես Աստվածաշունչի իմաստով: Ինչպես՝ «*Ըստ գրեցելումն յօրէնսն*. «Որով եւ մեղանչէ ոք, նովինք եւ տանջեսցի»» (էջ 84, հղվել է՝ Առակաց, ԺԱ, 17), կամ՝ «...վասն զի ոչ զգիրս գիտին եւ ոչ զգօրութիւնս գրոց՝ *ըստ Տեառն բանի*» (էջ 242, Մատթեոս, ԻԲ, 29), կամ՝ «...վասն որոյ ոչ կատարիր»՝ *ըստ վկայութեան Մաղմուխն*, թէ ոչ Տէր շինէ զտուն, ի մանիր վաստակին շինողք նորա» (էջ 198, Սաղմոս ԸԻԶ, 1), և այլն:

Ինտերտեքստը «Գիրք պատմութեանց»-ում հաճախ հանդես է գալիս ներփակ կերպով: Սակայն ներփակությունը դեռևս թաքնվածություն չէ, առավել ևս Դավիթեցու մոտ, քանզի նա, հազվադեպ բացառություններով, ապահովում է նշան-ցուցիչի գործառնությունը, որն էլ բացահայտում է ինտերտեքստի աղբյուրը: Բավարարվելով նշան-ցուցիչով՝ Դավիթեցին, ըստ ամենայնի, վստահ է եղել աստվածաշնչյան տվյալ դրվագի համընկնողության և, ընդհանրապես, ընթերցողի սուրբգրային իմացությունների վրա: Դա ժամանակի մտածողության առանձնահատկություններից է, որ միջնադարյան տեքստերի վերլուծության-մեկնության պարագային անպայման պետք է հաշվի առնել: Դիտարկենք հետևյալ օրինակը, որտեղ աստվածաշնչյան ինտերտեքստը համեմատության օբյեկտ է. «Ժակ այլք ոմանք ասեն թէ Մելքիսէ կաթողիկոսն էր այր փառամոլ եւ հետևող նախագահ իշխանութեան, յորոյ պատճառէ բաշխէր առատութեամբ ինչս ամենեցուն, եւ զամենեցուն զսիրտսն հանգուցանէր առ ինքն, և զամենեսեան առներ ինքեան բարեկամ *ըստ նմանութեան Աբիսողոմայ*» (էջ 58): Այստեղ ընդգծված հղումը նշան-ցուցիչի դեր է կատարում և ներփակում է հետևյալը. «Երբ մարդ կը մօտենար անոր խոնարհութիւն ընելու, անիկա ձեռքը կ'երկնցներ, զանիկա կը բռներ ու կը համբուրէր: Աբիսողոմ դատաստանի համար թագաւորին եկող բոլոր Իսրայէլին այսպէս ընելով, Իսրայէլի մարդոց սիրտը իրեն դարձուց» (Բ. Թագ., ԺԵ, 5-6):

Այս առումով առավել հետաքրքիր են երկու այլ՝ ավելի մեծ պարագր-կում ունեցող համեմատությունների օրինակներ. «...առ ժամայն դարձոյց զսիրտ խանին ի քաղցրութիւն, *որպէս Արտաշէս արքայի ի վերայ Մուրաքէի, եւ բարկութիւն ի վերայ Համանայ*» (էջ 234): Այս համեմատության իմաստը ինչպես հարկն է հասկանալու համար, պետք է ծանոթ լինել աստվածաշնչյան «Եսթերայ գրքի» տասը գլուխներից առնվազն առաջին յոթին: Իսկ ահա հետևյալ օրինակում ամբողջ Ելից գիրքը պարագրկված է մեկ

նախադասության մեջ և օգտագործվել է իբրև համեմատություն. «Բանգի ո՛չ տան թոյլ Պարսիկքն ելանել յերկրէն խրեանց, որպէս Եգիպտացիքն՝ գազզն Իսրայէլ» (էջ 97):

Ներփակ բնույթի են նաև ինտերտեքստուալ այն կիրառությունները, երբ Դավրիժեցին դիմում է ավետարանների՝ Հիսուս Քրիստոսի կողմից պատմվող առակներին ու գրույցներին: Այստեղ իբրև նշան-ցուցիչներ ծառայում են այդ առակների ու գրույցների վերնագրերը կամ վերնագրին մոտ հղումները: Բարսեղ վարդապետի դիմանկարը գծելիս, օրինակ, Դավրիժեցին ներբերում է այդպիսի մի հատված՝ նշելով՝ «Եւ որպէս Տէրն Քրիստոս յառակս երեք նկանակին ասաց...» (էջ 312, հղվել է՝ Դուկաս, ԺԱ, 5-8): Կամ՝ այսպիսի օրինակ. «...ըստ տէրունական առակին՝ որ վասն այրոյն և անիրաւ դատաւորին պատմէ...» (էջ 185, Դուկաս, ԺԲ, 2-4): Այստեսակ կիրառություններում Դավրիժեցին երբեմն դիմում է ինտերտեքստի թաքնված կերպին, երբ այն ճանաչելու համար իմացական համապատասխան պատկերացումն է հարկավոր: Բերվելիք օրինակում ինտերտեքստն իբրև համեմատության օբյեկտ է կիրառված: Այն ներփակում է «Չար ոգիին վերադարձը» գրույցը, որ առկա է Մատթեոսի ավետարանի ԺԲ գլխի 43-45 համարներում՝ «Երբ պիղծ ոգին մարդէ մը ելլէ, անջուր տեղերը պտըտի՝ հանգստութիւն փնտռէ ու չգտնէ. Այն աստե՛ն կ'ըսէ. «Դա՞մանմ անդէն իմ տունս, ուրկէ ելայ»: Կու գայ զանկիւս կը գտնէ պարսպ, մաքրուած ու զարդարուած: Այն աստե՛ն կ'երթայ եւ իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ անելի չար ու մտնելով հոն կը բնակին: Այն մարդու վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ»: Ահա թէ ինչպէս է «թաքցրել» այդ գրույցը Առաքել Դավրիժեցին. «Եւ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին զմի ունէր բնակեցուցեալ յինքեան ի զօրացն չար այսու. եւ արդ՝ այսն այն առաջին, զեօթն այլ այսս չարագոյնս քան զինք առեալ ընդ ինքեան, եկեալ բնակեցաւ ի մովրովս յայս. եւ եղև սորայս վերջինն չար քան զառաջինն» (էջ 122): Ինչպէս տեսնում ենք, սովորական ու գրեթէ մշտապես գործածական հղումն Ավետարանին՝ նույնիսկ նշան-ցուցիչի ձևով, այս պարագային քացակայում է: Թերևս այս գրույցը էլ ավելի համընկալաբար է եղել ժամանակին:

Ինտերտեքստը յուրովի է դրսևորվում համեմատություն-հակադրությունների մեջ: Աշխատության ընդգրկած ժամանակաշրջանի դրամատիկ իրադարձություններին անդրադառնալիս՝ Դավրիժեցին պարտադիր պատմության ընթացքի վկայագրումն ուղեկցում է ողբի ժանրին ներհատուկ գեղարվեստական միջոցների կիրառությամբ: Այդ կարգի հատվածների մասին խոսելիս՝ իրավացիորեն նշվում է պատմահայր Մովսես Խորենացու ազդեցության մասին: Վարագ Առաքելյանն, օրինակ, գրում է, թե՝ «Նա (Դավրիժեցին-Ա.Ն.) իբրև գրող մեծ Խորենացու գրական հմայքին է ենթարկված և նրա նման էլ ողբում է Հայաստանի ու հայ ժողովրդի գլխին պայթած մեծ գուլումի առիթով»⁵: Սակայն կառուցվածքային առումով մեծ

դերակատարում ունեն Աստվածաշնչի հետ ինտերտեքստուալ հարաբերությունները: Ողբալով երևույթը՝ պատմիչն ինքն է նկարագրում-պատկերում նրա նախնին (որպես կանոն՝ երջանիկ, գեղեցիկ, փառավոր) վիճակը, իսկ ներկա կացությունը, որ, բնականաբար, անցյալի սրված հակադրությունն է բոլոր մակարդակներում, ներկայացնելու համար դիմում ինտերտեքստի օգնությանը: Բերվելիք օրինակում Դավիթեցին համադրելով օգտագործել է Նսայու մարգարետության ԺԳ զվիի 21-րդ եւ Երեմիայի մարգարետության Ծ զվիի 39-րդ համարները, թեպետ պատմիչն ինքը հղումն անում է միայն Նսայուն. «Եւ յաղագս երկնամման եւ աղինասարաս եկեղեցեաց զի՞նչ ասացից՝ որք ի խաւարի մնացեալ եւ ի բնակչաց թափուր եղեալ՝ մերկացեալ ի զարդուց՝ եղեալ *հանգրուանք համբարուաց եւ ջայլամաց ըստ Նսայեայ տեսանողի, որջք աղուխուց եւ նապատակաց, մակադտեղք խաղանց եւ անդեոց, բոյնք բոչնոց և աւերաբնակ բուոց*» (էջ 88): Սա, թերևս այն պատճառով, որ տեքստային հարազատություն ու համընկնումներ կան Նսայու մարգարետության և Երեմիայի մարգարետության նշված համարների միջև:

Աստվածաշնչյան ինտերտեքստի ամենատարածված դրսևորումը Առաքել Դավիթեցու աշխատության մեջ, դրա՝ իբրև օրինակ-հաստատումն է, զոված-ավանդվածի իրականացումը կյանքում: Ինչպես՝ «Արդ՝ աստանօր պարտ է մեզ սքանչանալ եւ հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գործոցս՝ որ կատարեցաւ ի վերայ Մեքիսէթ կաթողիկոսին. զի սա նախ՝ զԱստուծոյ օգնութիւնն անտես արարեալ՝ ի մարդ յուսացաւ, եւ ստունգանեաց *զբանս օրինացն, որ ասէ. «Անիծեալ որ դիցէ զոյս իւր ի մարդ»*» (էջ 188, հղվել է՝ Երեմիա, ԺԷ, 5): Կամ՝ քաղաքերումներ կատարելով Ելից գրքից (Ա, 6, 8-10)՝ «Եւ որպէս ասէ Գիրն աստուածային, թէ վախճանեցաւ Յովսէփ եւ ամենայն եղբարք նորա եւ ամենայն ազգն այն. եկաց այլ թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ, և ասէ ցազգն իւր. «Եկայք, հնարեսցուք ինչ ազգին Իսրայէլի», Դավիթեցին անմիջապէս ավելացնում է. «Ըստ այսմ օրինակի պատահեաց եւ մերոյս ազգի...» (էջ 96): Հակոբ Օշականը, արձանագրելով այս երևույթը, դրա մեջ նաև դրամատիկ շեշտեր է տեսնում. «Հայ պատմիչը պիտի մխիթարուի Սուրբ Գիրքին համարները մեր արիւնին ու մեր պատիւին զհնովը ապացուցուած տեսնելու մեծ երջանկութեամբը»⁶:

Օշականի այս դիտարկումն, անշուշտ, առավել խորքային մեկնություն է հայցում:

Դավիթեցու «Գիրք պատմութեանց» աշխատության մեջ հետաքրքիր կիրառություն ունի Աստված բառը՝ իր տարակերպ պարագրկումներով: Ուղղակիորեն *Աստված* շատ հազվադեպ է ասում Դավիթեցին: Սա մի կողմից սրբազանության-վախվորածության, Աստծո ամտեսանելի ու մշտական ներկայության զգացումի անընդհատական ուղեկցությամբ է պայմանավորված, մյուս կողմից և առաջինով թելադրված՝ կարծես թե միաբառ բնորոշումը, որքան էլ այն տարրդունակ է, միշտ քիչ է թվացել: Եվ ձևի

որոնումները տարել են հետաքրքիր ճանապարհներով, եւ այդ համապատկերում տպավորիչ կերպերով է արտահայտվել նաև աստվածաշնչյան ինտերտեքստը: *Աստված* ասելու փոխարեն *Դավրիժեցին* քաղաքերում է փառաբանական-գոհաբանական-հերքողական որևէ հատված Աստվածաշնչից, և դրանք այս դեպքում դառնում են յուրօրինակ շրջաստություններ: Ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում՝ «...այն, որ թագաւոր է թագաւորաց՝ եւ Տէր տէրանց, որ *ի ձեռնն ունի զսիրտ ամենայն բռնաւորաց՝ ըստ ի մատտոյն Սողոմոն...*» (Էջ 234): Հավելեմ միայն, որ քաղաքերված է «Գիրք Առակաց»-ի ԻԱ գլխի 1-ին համարը՝ «Թագաւորին սիրտը ջուրի վտակներու պէս է Տէրոջ ձեռքին մէջ, // Զանհկա ո՛ր կողմը ուզէ կը դարձընէ»:

Երբեմն Աստվածաշունչը իբրև ինտերտեքստ ներդրվում է միջնորդավորված՝ որպես ուրիշի ուղղակի խոսք: Սա ուշագրավ կիրառություն է, քանզի մի կողմից որպես *պատմագրական* հուշարձանի վկայություն երևանում է, որ Աստվածաշնչի հետ ինտերտեքստուալ հարաբերությունը ոչ միայն ու երբեմն նաև՝ ոչ թե զեղարվեստական մտածողությանը բնորոշ երևոյթ է, այլ կենսական, ապրվող մտածողության որակ, մյուս կողմից՝ գոտ գրական օրինակ, իբրև խոսքի կառուցման կերպ: Փիլիսոս կաթողիկոսի վախճանի նկարագրության մեջ *Դավրիժեցին*՝ իբրև պատմիչ, հարազատորեն փոխանցում է նրա վերջին խոսքերը: Այս դեպքում կաթողիկոսի խոսքն է կառուցված ինտերտեքստային հերթագայություններով (տե՛ս Էջ 278-279): Նույն կերպ՝ նաև Մելքիսեթ վարդապետի՝ մահվանից առաջ իր աշակերտների առջև ասված խոսքում է: Այստեղ, սակայն, թաքնված ինտերտեքստ է. Մելքիսեթ վարդապետը, *Դավրիժեցու* վկայությամբ, իր խոսքում օգտագործում է «Երեք ծառաներուն առակի» (Մատթեոս, ԻԵ, 14-30, նաև՝ Դուկաս, ԺԹ, 11-27) «Ուրեմն պէտք էր որ իմ ստակս սեղանատրոններուն տայիք, որպէս զի եկած ատենս շահովը առնէի» հատվածը. «...բայց արդ՝ որովհետեւ դաս ասացի ձեզ, եւ զընկալեալն ի Տեառն *զարծաթ բանին արկի ի սեղանատրադ* այսուհետեւ փոխանակ տրտմութեան՝ ունիմ մխիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ, այլ սերմանեալն առ ձեզ բան Տեառն մնայ յաշխարհի...» (Էջ 317): Մյուս կողմից՝ ինտերտեքստը վերափոխադրվել է. սա աստվածաշնչյան խոսքի իրականացման փաստումն է:

Աստվածաշնչյան ինտերտեքստը կիրառվում է նաև պատմագրական երկերում շատ տարածված դիմանկարները կերտելիս: Դիմանկարի ոչ ավարտուն, մասնավոր վիճակը տվյալ անձնավորությանը նկարագրելու միջոցն է: Հետևյալ օրինակում Խաչատուր վարդապետի բնավորության դրական գծերը *Դավրիժեցին* ներկայացրել է սեփական խոսքի և ինտերտեքստի զուգահեռ կիրառումներով. «Ժսկ վարդապետն ըստ իրում քաղցր եւ հեզ բնութեանն ոչ առ երեսս յանդիմանէր զՆիկօլն, այլ մեղմ եւ խրատօրէն ինքն եւ նա միայն խօսէր ընդ նմա, *ըստ պատուիրանին Տեառն թէ, ասասցիր*

մնա, յորժամ դու եւ նա միայն իցէք» (էջ 299, հղվել է՝ Մատթեոս, ԺԸ, 15): Մեկ այլ տեղում Պողոս առաքյալի հետևյալ խոսքերի (Թուղթ առ Գաղատացիս, 9, 24)՝ «Անոնք որ քրիստոսիմներն են՝ *իրենց մարմինը խաչը կը հանեն բնական կրքերով ու ցանկություններով մէկտեք»*, ընդգծված հատվածը Դավրիժեցին ներհյուսում է իր խոսքին՝ ամբողջացնելու համար Սելքիսեթ արեղայի դիմանկարը. «...երկս եւ աշխատությունս կրեաց ի վերայ արտաքին գրոց, զի թող գայլ ժամանակսն, զոր ընդ ընկերացն, եւ կամ չափաւոր ճգնութեամբ զտքնութիւն կրեալ էր, այլ յատուկ տասն ամ առանց թուլանալոյ և ներելոյ ինչ, *զմարմինն իւր ի խաչ բարձեալ՝ կարեօք եւ ցանկութեամբ հանդերձ քստ Պողոսի...*» (էջ 315):

Այս կերպ, Աստվածաշունչը ներկա է «Գիրք պատմութեանց» աշխատության գրեթե բոլոր էջերում՝ ունենալով բազմաբնույթ կիրառություն: Ինչպես կարելի է դատել վերը բերված օրինակներից՝ ինտերտեքստուալ հարաբերությունների առումով Դավրիժեցու երկը հիմնականում մնում է ինտերտեքստուալության հիմնական ձևերից *մասնակցության*, հազվադեպ՝ նաև *ձևափոխության* մակարդակին: Աստվածաշնչյան տեքստի *ժխտման* ձևը Դավրիժեցու մոտ հասկանալի պատճառներով խսպառ բացակայում է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությանը Լ. Ա. Խաճաբյանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990: Այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, բոլոր ընդգծումներն իմն են—Ա.Ն.:
2. Յակոբ Օշական, Մեր մատենագիրները (վերլուծումներ), Ամբիփաս, 1987, էջ 47:
3. Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 524:
4. Մեր ձեռքի տակ եղել է Աստվածաշնչի բեյրության՝ 1981 թվականի արևմտահայերեն հրատարակությունը:
5. Վարազ Առաքելյան, Առաքել Դավրիժեցի (մահվան 300-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 1970, թիվ 3, էջ 44:
6. Յակոբ Օշական, Մեր մատենագիրները, էջ 47: